

ՊԱՏԳԱՄԱԽՈՐԻ ՄՌ ՅՈՒՍԵՍԵՑԲԵԼ

(Ծար. 1)

23 Յունիս . — Խրիմեան սկզբանին վրայ ըստ «Եթէ այս գործը չյաջողի , այն ատեն Դիտեմ ինչ պիտի ընեմ եւ ըստմ , իրենց խելքին հաւանեցան եւ մեր խօսքը բանի տեղ չդրին :

— Ի՞նչ է խօսքդ որ բանի տեղ գնել չեն ուզեր , հարցուցի :

Ի սկզբան չուզեց ըսել , բայց երբ պնտեցի բառ :

— «Ես առաջին օրէն երեք բան առաջարկեցի . ա . Ծածուկ բան չընել , այլ յայտնի . բ . այս գործին 10,000 ոսկի յատկացնել , եւ դ . բոլոր առաջնորդները Պոլիս հրաւիրել եւ անոնց խորհրդով գործել . »

— «Երկուքին համար իրսւունք չունիս , ըսի . մառցեր ես Պոլիսը . միթէ կարելի՞ էր այս աշխատութիւնը չծածկել թրքէն . առաջնորդները ժողվելով ի՞նչ արդիւնք պիտի ունենայինք , եւ միթէ կարելի՞ էր զանոնք Պոլիս բերել երբ այն գեշ օրիրուն մէջ ամէն մէկը իր հօտին քով պէտք էին : »

— «Այս՝ ըստ , զուք Պոլսեցիք դաւառացիները մարդու աեղ չէք գներ . առաջնորդները հիմա ի՞նչ կ'ընեն որ անոնց ներկայութիւնը այնչափ հարկաւոր ըլլայ : »

— «Հայրիկ , ըսի , այդ գաղափարը շատ անդամ կը կրկնես , իբր թէ Պոլսեցին զգաւառացին մարդու տեղ գներ , այդ շատ մխալ է եւ նոյն իսկ վտան , աւոր ու ապագային կը սպառնայ . այդ կարգի խօրութեան գաղափարներդ այս օրէն սերմանելը լաւ հետեւանքներ չունենալը . հարկաւ ամէն մարդ աստիճանաբար զիւտէ , ով որ շատ ուսած է , շատ մարդ կը տեսնէ ու շատ մարդ կը լսէ ու խելք ալ ունի , նա աւելի զիաէ եւ պէտք է որ յարգուի այն . նոյն իսկ Պոլսոյ մէջ ամենքը հաւասար չեն . ես կը խօստվանիմ որ զմեղ այժմ առաջնորդողները ինչ աւելի հմուտ են քաղաքական կենաց եւ ես պէտք է հետեւիմ անոնց , բաւական է որ աեսեմ եւ զիանամ թէ աղդին օգտակար է անոնց ընթացքը . իսկ եթէ առաջնորդները այնչափ հարկաւոր չեն , ի՞նչո՞ւ

այսքան հոգ կ զատանինք իրենց համար , հարկ է այն ատեն վերցնել . սակայն ես կը կարծեմ որ ժողովութեան ներկայութեան օշուաւ կը քաղէ եւ . ոյս կ'առնէ . այսպիսի ժամանակի մէջ եթէ անսնք հետանանք , ինունք գույնք գէշ կ'ըլլայ , թող որ անոնց ամենէն ալ պէտք եւ զանցով լուսաւ լուսաւ առնելու յուսալ տեղի չունի . Պոլսոյ մէջ առաջնորդ եղող եւ գաւառները լաւ ձմնչցող եկեղեցականներ կան , ահա գուն , ահա պատրիարքը եւ ութասա ալ եպիսկոպոսներ եկեղի հետ սարացքը եղին այս գործին թղթերը : իսկ զրամի մասին ըստածք իրաւացիէ . ես ալ ըսի ի սկզբան թէ զրամ պէտք է եւ զրամով շատզիւրութիւններ կրնայինք ունենալ , բայց աղքատազգ մ'ենք , այսօր այսչափը կրցաւ ընել , ասոր ալ գոհ ըլլալու է : »

Ու ինդիրը փակուեցաւ :

— Կորչաքոֆին ունկնդրութիւն խնդրելու զիր գրուեցաւ :

24 Յունիս . — Կորչաքոֆի այցելութեան գացին ժամը 11 ին եւ ժամը 4 ին ալ կայսրուն ույն ներկայացան :

Երեկոյին , նարպէյ եւ Զերազ երեկոյիթին գացին , եւ հրանանդ տուի Զերազի որ Վատինկթոնի թոնի ըսէ թէ պատրիարքը չնորհակալութիւն եւն հեռագրած է , ակսնել նաեւ Պիղմարքը , Սոլզպէրին եւ Շուվալոֆը եւ ունկնդրութիւն խնդրել Պիղմարքի համար՝ Պիլոէն :

«Եայմզ»ի թղթակիցները տեսել անհաճոյ յօդուածին համար , եւ մասնաւորաբար նարպէյ առանձին չի ողուրւ :

— Եկան եւ միայն ծուվալոփին յաջողեր են . Քարամթուորիէն ալ նարպէյ ունկնդրութիւն ինդրեր է :

25 Յունիս . — Խրիմեան Շուվալոփի երթալ չուզեր առարկելով թէ ինք կուռքի նման կը նստի եւ իրենք կը խօսին , ու իբրէ առնել խօսիլ կամ իրեն հասկցնել չունին : «Երեք ամիս է որ այս բանը կ'ըլլայ , կ'ըսէ , եւ քանի որ նշանակութիւն մը չունիմ , ի՞նչո՞ւ գամ . կաւրելի է ես կարեւոր խորհուրդ մ'ունիմ , կամ հարցման մը , ի՞նչորոյ մը վրայ լաւ պատասխան մը պատրաստած եմ : Զերազ կ'ըսէ թէ տեսակցութիւնները այնչափ կարծ եւ աճապարանօք կ'ըլլան որ ժամանակ չմնար թարգմանելու եւ իբրէ պատասխան առնելով հաղորդելու . ի՞նքը միշտ յանուն իւր կը խօսի եւ կը զգայ թէ բնաւ անոր պատկառանաց վնաս մը չըլլար :

ՍՏԵՓՈՆ ՓԱՓՈՒՅԵԱՆ

(Ծարունակելի)